



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

“ 10 ” 05 2019 թ.

N 308-Ն

ք. Երևան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11 N 698-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության կապի օպերատորների միջև գործող ոռոմինգ ծառայության սակագնի նվազեցման հնարավորության հարցը ուսումնասիրելու նպատակով:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Գ. Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության
տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարության կապի և
հեռահաղորդակցության
տեխնոլոգիաների վարչության պետ,
(խմբի ղեկավար)

Մ. Դանիելյան

Հայաստանի Հանրապետության
տրանսպորտի, կապի և

տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կապի և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ

Գ. Գևորգյան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ (համաձայնությամբ)

Վ. Գրիգորյան

«ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավաբանական տնօրեն (համաձայնությամբ)

Դ. Հայրապետյան

«ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փոխկապակցման բաժնի ղեկավար (համաձայնությամբ)

Գ. Ղազանչյան

«ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության միջազգային ծառայությունների բաժնի պետ (համաձայնությամբ)

Կ. Եղիազարյան

«Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության միջօպերատորական համագործակցության ծառայության ղեկավար (համաձայնությամբ)

2. Աշխատանքային խմբին՝ եռօրյա ժամկետում ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կապի օպերատորների միջև գործող ռոումինգ ծառայության սակագնի նվազեցման հնարավորության հարցը և արդյունքները ներկայացնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գ. Վարդանյանին:

X

Hakob Arshakyan

Signed by: ARSHAKYAN HAKOB 2604850273



ՆԱԽԱՐԱՐ

Հ. ԱՐՇԱԿՅԱՆ

“ 10 ” 05 2019թ.
ք. Երևան